



# COVID-19-ի դեմ Պատվաստում. Հաճախ Տրվող Հարցեր ՊԱՏՎԱՍՏՈՒՄ

## Ինչպե՞ս կարող եմ պատվաստվել

Պատվաստանյութերը հասանելի են Լոս Անջելեսի Շրջանի հարյուրավոր վայրերում, ինչպես օրինակ՝ կլինիկաներում, դեղատներում, աշխատավայրերում, դպրոցներում, երկրպագության վայրերում և այլ համայնքային տարածքներում: Տնային պատվաստումը հասանելի է տունը լքել չկարողացող անձանց համար: Պատվաստումների շատ վայրեր նախօրոք ժամադրում չեն պահանջում:

Պատվաստվելու համար այցելեք [VaccinateLACounty.com](http://VaccinateLACounty.com) կայքէջ և ընտրեք <<[Սեղմեք Այստեղ Պատվաստվելու Համար](#)>> հղումը՝ պատվաստման վայր գտնելու կամ տնային պատվաստում [պահանջելու](#) համար: Օգնության համար կարող եք գանգահարել **Հանրային Առողջության Վարչության (DPH) Պատվաստումների Զանգերի Կենտրոն՝ 833-540-0473** հեռախոսահամարով, շաբաթը 7 օր՝ առավոտյան 8-ից երեկոյան 8:30-ը: Նրանք կարող են հաշմանդամություն ունեցող մարդկանց համար կազմակերպել տնային պատվաստում, դեպի պատվաստման վայր անվճար փոխադրում կամ օգնել տրամադրել պարատրանզիտ (հատուկ տրանսպորտ հաշմանդամություն ունեցող անձանց համար) և կատարել այլ ծառայություններ: Տեղեկությունները հասանելի են բազմաթիվ լեզուներով 24/7՝ 2-1-1 համարով:

## Արդյո՞ք ես պետք է վճարեմ COVID-19-ի դեմ պատվաստման համար

Ոչ: Եթե ունեք ապահովագրություն, ձեր բժիշկը կամ դեղատունը կարող են ձեր ապահովագրական ընկերությունից գանձել ձեր պատվաստման վճարը: Բժշկական ապահովագրություն չունեցող անձինք խոչնդակ կարող են անվճար պատվաստվել COVID-19-ի դեմ: Չկան սեփական գրպանից վճարներ:

## Արդյո՞ք COVID-19-ի դեմ պատվաստվելիս ինձ կհարցնեն իմ ներգաղթի կարգավիճակի մասին

Ոչ: COVID-19-ի դեմ պատվաստումը կատարվում է անվճար՝ անկախ ներգաղթի կարգավիճակից: COVID-19-ի դեմ պատվաստվելիս ձեզ չեն հարցնի ձեր ներգաղթի կարգավիճակի մասին: Ձեր բժշկական տեղեկությունները գաղտնի են, և COVID-19-ի դեմ պատվաստումը չի ազդում ձեր ներգաղթի կարգավիճակի վրա: Պատվաստվելու համար ձեզ հարկավոր չէ կառավարության կողմից տրված անձը հաստատող փաստաթուղթ (ID) կամ նամակ ձեր գործատուի կողմից: Ներգաղթի վերաբերյալ հարցերի համար այցելեք Ներգաղթյալների Հարցերով Գրասենյակի (Office of Immigrant Affairs) կայքէջը՝ [oia.lacounty.gov](http://oia.lacounty.gov), կամ գանգահարեք 800-593-8222 հեռախոսահամարով:

## Արդյո՞ք ես պետք է տրամադրեմ բջջային հեռախոսահամար կամ էլ. հասցե

Ոչ: Պատվաստվելիս ձեզ կհնդրեն տրամադրել էլ. հասցե կամ բջջային հեռախոսահամար: Այս տեղեկատվությունը մուտքագրվելու է Կալիֆորնիա Նահանգի Պատվաստումների Գրանցամատյանում (CAIR), որպեսզի կարողանաք ձեռք բերել COVID-19-ի դեմ պատվաստման թվային քարտը: Այն կարող է օգտագործվել նաև հիշեցումներ ուղարկելու համար, եթե COVID-19-ի դեմ պատվաստանյութի լրացուցիչ դեղաչափեր ստանալու ժամանակը գա կամ առաջարկվեն լրացուցիչ դեղաչափեր: Պատվաստումների թվային գրանցումը ձեր պատվաստման կարգավիճակն ապացուցելու անվճար և հարմարավետ տարբերակ է: Այն հատկապես օգտակար է, եթե կորցնեք ձեր պատվաստման սպիտակ քարտը: Ձեզնից չի պահանջվում տրամադրել ձեր էլ.





# COVID-19-ի դեմ Պատվաստում. Հաճախ Տրվող Հարցեր ՊԱՏՎԱՍՏՈՒՄ

հասցեն կամ բջջային հեռախոսահամարը՝ պատվաստվելու և CDC-ի COVID-19-ի դեմ պատվաստման սպիտակ քարտը ձեռք բերելու համար: Սակայն այն կարող է բարդացնել հետագայում պատվաստանյութերի թվային քարտը ձեռք բերելու գործընթացը: Պատվաստումների թվային քարտի մասին կարող եք իմանալ ավելին [myvaccinerecord.cdph.ca.gov](http://myvaccinerecord.cdph.ca.gov) կայքէջում, իսկ գաղտնիության պահպանման մասին՝ [այստեղ](#):

## Որտեղի՞ց կարող եմ ձեռք բերել իմ պատվաստման գրանցման/քարտի պատճենը

CDC-ի COVID-19-ի դեմ Պատվաստումների Գրանցման Քարտը (Սպիտակ Քարտ) պատվաստման պաշտոնական ապացույցն է: Պատվաստվելուց հետո յուրաքանչյուրին տրամադրվում է մեկ օրինակ: **Խնդրում ենք պահպանել այն ապահով, քանի որ այն փոխարինման ենթակա չէ:** Դիտարկեք այն լուսանկարելը կամ պատճենելը:

Բոլոր նրանք\*, ովքեր պատվաստվել են Կալիֆորնիայում, կարող են պահանջել COVID-19-ի դեմ պատվաստման քարտի թվային տարբերակը այստեղ՝ [myvaccinerecord.cdph.ca.gov](http://myvaccinerecord.cdph.ca.gov): Սա նաև պատվաստման պաշտոնական գրանցումն է: Այն կարելի է ներբեռնել Google Pay-ի թվային դրամապանակում՝ Android հեռախոսներում, կամ ներբեռնել Apple Health հավելվածը՝ iPhone հեռախոսներում: Կարող եք նաև նկարել ձեր COVID-19-ի դեմ Պատվաստման Թվային Քարտի Էկրանը ձեր հեռախոսում (screenshot) և պահպանել այն ձեր լուսանկարներում: Ձեր ընտանիքի յուրաքանչյուր անդամ կարող է ստանալ պատվաստման քարտ, նույնիսկ եթե պատվաստվելիս դուք օգտագործել եք նույն էլեկտրոնային հասցեն կամ բջջային հեռախոսահամարը: Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք [Պատվաստման Գրանցումներ](#) կայքէջը:

\*Եթե ձեր պատվաստումն իրականացրել է դաշնային գործակալությունը (օր.՝ Պաշտպանության Նախարարություն, Ամերիկայի Բնիկների Առողջապահական Ծառայություն կամ Վետերանների Հարցերով Վարչություն), դուք պետք է պատվաստման գրանցումը (քարտը) պահանջեք անմիջապես այդ գործակալությունից:

## Արդյո՞ք ես պետք է համաձայնություն տամ իմ երեխային պատվաստելու համար

18 տարեկանից փոքր պատանիների պատվաստման համար անհրաժեշտ է ծնողի/խնամակալի կամ ինսամոդի համաձայնությունը: Եթե դուք չեք կարող ներկա գտնվել, ապա թույլատրվում է համաձայնություն տալ հեռախոսով, տեսագրությամբ կամ գրավոր կերպով: Ստուգեք այն վայրի համաձայնության պահանջները, որտեղ դուք նախատեսում եք գնալ: Եթե դա Հանրային Առողջության Վարչության կողմից ղեկավարվող վայր է, կարող եք տեսնել պահանջները և ներբեռնել համաձայնության ձևը [ph.lacounty.gov/vaccineappointment](http://ph.lacounty.gov/vaccineappointment) կայքէջից՝ սեղմելով << [պատրաստվեք ձեր այցին](#) >> (“preparing for your visit”) կամ զանգահարելով Պատվաստումների Չանգերի Կենտրոն 1-833-540-0473 հեռախոսահամարով (ամեն օր՝ առավոտյան 8-ից երեկոյան 8:30-ը):

Կիրառվում են որոշ բացառություններ: 15 տարեկան և ավելի բարձր տարիքի անչափահասները, որոնք բավականաչափ ինքնուրույն են (օրինակ՝ ճանաչվել են որպես լրիվ գործունակ, ամուսնացած են կամ նախկինում ամուսնացած են եղել) կարող են տալ իրենց սեփական համաձայնությունը: Եթե դուք ինսամատար, բարեկամ-ինսամոդ կամ Բնակավայրում Տրամադրվող Կարճաժամկետ Խնամքի Ծրագրի (STRTP) աշխատակից եք, կարող եք տալ համաձայնություն, եթե





# COVID-19-ի դեմ Պատվաստում. Հաճախ Տրվող Հարցեր ՊԱՏՎԱՍՏՈՒՄ

խնամատար երեխան համաձայն է: Եթե դուք խնամատար եք և չեք տալիս ձեր համաձայնությունը, սակայն ձեր խնամատար երեխան ցանկանում է պատվաստվել, նա կարող է դիմել իր իրավաբանին:

## Ի՞նչ փաստաթղթեր պետք է ներկայացնեմ իմ երեխային պատվաստելու համար

Պատվաստման որոշ վայրերում կարող է պահանջվել լուսանկարով անձը հաստատող փաստաթուղթ (ID): Եթե դուք ձեր խնամակալության ներքո գտնվող երեխայի խնամակալն եք և ձեր երեխան չունի լուսանկարով անձը հաստատող փաստաթուղթ, դիմեք երեխայի իրավաբանին: Կամ կարող եք այցելել Լոս Անջելեսի Շրջանի Հանրային Առողջության Վարչության կողմից ղեկավարվող վայր, որը չի պահանջում լուսանկարով անձը հաստատող փաստաթուղթ:

Համաձայնության վերաբերյալ տեղեկությունները տե՛ս վերևում: Ստուգեք այն վայրի պահանջները, որտեղ նախատեսում եք գնալ: Դրանք կարելի է գտնել այդ վայրերի կայքէջերում կամ ժամադրությունը հաստատող էլեկտրոնային կամ տեքստային նամակում: Լոս Անջելեսի Շրջանի Հանրային Առողջության Վարչության պատվաստման պահանջների մասին տեղեկությունների համար այցելեք [ph.lacounty.gov/vaccineappointment](http://ph.lacounty.gov/vaccineappointment) կայքէջ և սեղմեք << [պատրաստվեք ձեր այցին](#) >> (“preparing for your visit”) կամ զանգահարեք Պատվաստման Չանգերի Կենտրոն՝ 1-833-540-0473 հեռախոսահամարով (ամեն օր առավոտյան 8-ից երեկոյան 8:30-ը):

## Արդյո՞ք ես, այնուամենայնիվ, պետք է պատվաստվեմ, եթե արդեն վարակվել եմ COVID-19-ով

Այո: Դուք պետք է պատվաստվեք COVID-19-ի դեմ, նույնիսկ եթե արդեն վարակվել եք COVID-19-ով: COVID-19-ի վարակից ապաքինվելուց հետո COVID-19-ի դեմ պատվաստումը տրամադրում է հավելյալ պաշտպանություն COVID-19-ից:

COVID-19-ի դեմ պատվաստումը որոշակի պաշտպանություն է ստեղծում COVID-19-ով հետագայում հիվանդանալու դեմ, ինչը երբեմն կոչվում է <<բնական անվարակունակություն>> (“natural immunity”): Պաշտպանության մակարդակը, որը մարդիկ ստանում են COVID-19-ից, կարող է տարբեր լինել՝ կախված նրանից, թե որքան մեղմ կամ ծանր են նրանք հիվանդացել, ինչպես նաև վարակմանը հաջորդող ժամանակից և տարիքից: Ներկայումս չկա որևէ թեստ, որը կարող է վստահաբար որոշել՝ արդյոք անձը պաշտպանված է վարակից:

COVID-19-ով վարակվելուց հետո պատվաստվելն անվտանգ է, սակայն դուք պետք է սպասեք վիրուսից (կամ եթե ունեցել եք ախտանիշներ) ձեր ապաքինմանը և մեկուսացման շրջանի ավարտին: Սա նրա համար է, որ պատվաստման գնալիս չվարակեք բուժաշխատողներին և այլ մարդկանց:

Եթե ձեր խթանիչ դեղաչափը ստանալու ժամանակն է և վերջերս վարակվել եք, կարող եք որոշել հետաձգել ձեր խթանիչ դեղաչափը ստանալը վարակվելուց հետո 3 ամսով: Դա պայմանավորված է նրանով, որ վերջին ուսումնասիրությունները ցույց են տվել, որ վարակման և պատվաստումների միջև ժամանակահատվածի ավելացումը կարող է բարելավել ձեր իմունային համակարգի արձագանքը: Նաև այն պատճառով, որ ձեր վարակվելուց հետո շաբաթներ կամ





# COVID-19-ի դեմ Պատվաստում. Հաճախ Տրվող Հարցեր ՊԱՏՎԱՍՏՈՒՄ

ամիսներ շարունակ կրկնակի վարակման ավելի ցածր վտանգ կա:

Եթե դուք հիվանդացել եք երեխաների/մեծահասակների բազմահամակարգային բորբոքային համախտանիշով (MIS-C կամ MIS-A) խոսեք ձեր բժշկի հետ նախքան պատվաստվելը:

## Կարո՞ղ եմ պատվաստվել COVID-19-ի դեմ այլ պատվաստանյութերին զուգահեռ

Այո: Չափահասները և 5 տարեկան և ավելի բարձր տարիքի երեխաները կարող են պատվաստվել COVID-19-ի դեմ այլ, օրինակ՝ կարմրուկի, կապույտ հազի և գրիպի դեմ պատվաստումների զուգահեռ: Եթե ձեր երեխան պատվաստվում է COVID-19-ի դեմ այնպիսի վայրում, որը չի առաջարկում իրեն անհրաժեշտ մյուս պատվաստանյութերը, ապա ցանկացած պահի դուք կարող եք գնալ մեկ ուրիշ վայր՝ այդ պատվաստանյութերով պատվաստվելու համար: Պատվաստումների միջակայքում սպասել անհրաժեշտ չէ:

## Կարո՞ղ եմ կանոնավոր բժշկական գործողությունների ենթարկվել կամ անցնել հետազոտություն, եթե վերջերս պատվաստվել եմ COVID-19-ի դեմ

Կանոնավոր բժշկական ընթացակարգերի կամ հետազոտությունների մեծ մասը կարող են իրականացվել COVID-19-ով պատվաստվելուց առաջ կամ հետո:

Ծանոթություն: Եթե ձեր հերթական մամոգրաֆիկ հետազոտություն կատարելու ժամանակն է, և դուք վերջերս պատվաստվել եք COVID-19-ի դեմ, հարցրեք ձեր բժշկին, թե որքա՞ն ժամանակ պետք է սպասեք նախքան մամոգրաֆիա անելը: COVID-19-ի դեմ պատվաստված մարդկանց մոտ կարող է առաջանալ ավշային հանգույցների այտուց (որը կոչվում է լիմֆադենոպաթիա) թևատակի շրջանում, որտեղ կատարվել է ներարկումը: Այդ այտուցը բնական նշան է, որ մարմինը ստեղծում է պաշտպանություն COVID-19-ի դեմ: Այդ ժամանակավոր այտուցը կարող է կեղծ ցուցանիշներ պատկերել մամոգրաֆիկ հետազոտության արդյունքի վրա, հետևաբար կարևոր է անձնակազմին տեղեկացնել ձեր պատվաստման մասին: Լրացուցիչ մանրամասների համար տե՛ս Կրծքավանդակի Ստուգման Ընկերության՝ [խորհուրդներ COVID-19-ի դեմ Պատվաստվող Կանանց Համար](#) կայքէջը:

COVID-19-ի դեմ պատվաստումը կարող է նաև ազդել տուբերկուլյոզի (TB) որոշ տեսակի թեստերի արդյունքների վրա. տե՛ս CDC-ի [COVID-19-ի Պատվաստում և Այլ Բժշկական Գործողություններ](#) կայքէջը:

## Ինչպե՞ս պետք է պատրաստվեմ իմ պատվաստման այցին

- Հիշեք ձեզ հետ բերել անհրաժեշտ փաստաթղթերը և տրամադրել ձեր Էլեկտրոնային հասցեն կամ բջջային հեռախոսահամարը, եթե ունեք: Եթե դուք ժամադրվել եք, կարդացեք հաստատման Էլեկտրոնային նամակում նշված տեղեկությունները: Եթե ունեք հարցեր, օգտակար է դրանք գրելը:
- Դուք պետք է ստանաք տեղեկատվական թերթիկի թղթային կամ Էլեկտրոնային տարբերակը, որը ձեզ կպատմի ավելին COVID-19-ի դեմ հենց այն պատվաստանյութի մասին, որը դուք ստանում եք: COVID-19-ի դեմ յուրաքանչյուր հաստատված և թույլատրված





# COVID-19-ի դեմ Պատվաստում. Հաճախ Տրվող Հարցեր ՊԱՏՎԱՍՏՈՒՄ

պատվաստանյութ ունի իր տեղեկատվական թերթիկը, որը պարունակում է տեղեկատվություն, որը կօգնի ձեզ հասկանալ այդ պատվաստանյութի ընդունման վտանգներն ու օգուտները: Իմացեք ավելին [COVID-19-ի դեմ տարբեր պատվաստանյութերի մասին](#):

- Նախատեսեք պատվաստման վայրում մինչև մեկ ժամ մնալ: Սա ներառում է պատվաստանյութը ստանալուց հետո 15-30 րոպեն, որի ընթացքում կհետևեն ձեր առողջական վիճակին:
- Մի՛ դադարեցրեք ձեր կանոնավոր դեղամիջոցների ընդունումը պատվաստվելուց առաջ, եթե ձեր բժիշկը չի կարգադրել դադարեցնել:
- Խորհուրդ չի տրվում պատվաստումից առաջ ընդունել առանց դեղատոմսի վաճառվող դեղամիջոցներ (օրինակ՝ իբուպրոֆեն, ասպիրին կամ ացետամինոֆեն)՝ փորձելով կանխել պատվաստանյութի կողմնակի ազդեցությունները: Հայտնի չէ, թե ինչպես կարող են այս դեղամիջոցներն ազդել պատվաստանյութի արդյունավետության վրա: Եթե դուք կանոնավոր կերպով ընդունում եք այս դեղամիջոցները այլ պատճառներով, դուք պետք է շարունակեք դրանք ընդունել նախքան պատվաստվելը: Խորհուրդ չի տրվում նաև ընդունել հակահիստամիններ նախքան COVID-19-ի պատվաստանյութ ստանալը՝ ավերգիկ հակազդեցությունները կանխելու նպատակով:
- Կրեք [դիմակ](#) և այնպիսի հագուստ, որը թույլ կտա հեշտությամբ բացել ձեր թևի վերին հատվածը, որտեղ պետք է ներարկվի պատվաստանյութը: Նախքան պատվաստումը ընդունեք թեթև սնունդ և խմեք շատ ջուր (ամեն դեպքում ձեզ հետ հավելյալ ջուր բերեք):
- Եթե ձեզ անհրաժեշտ է ստանալ COVID-19-ի դեմ պատվաստանյութի լրացուցիչ դեղաչափ, նախքան պատվաստման վայրը լքելը ճշտեք, թե երբ և ինչպես պետք է ստանաք այն:

## Որտեղի՞ց կարող եմ ստանալ լրացուցիչ տեղեկատվություն



- Այս ՀՏՀ-ն կամ COVID-19-ի դեմ պատվաստման այլ թեմաների վերաբերյալ ՀՏՀ-ները տպելու կամ տեսնելու համար սկանավորեք QR ծածկագիրը կամ այցելեք [COVID-19-ի դեմ պատվաստման ՀՏՀ-ները](#) կայքէջ:
- [VaccinateLACounty.com](#)՝ ներառյալ [COVID-19-ի դեմ Պատվաստման Ժամանակցույցը](#), որն աղյուսակներով ցուցադրում է պատվաստման յուրաքանչյուր դեղաչափի ընդունման ժամանակը և տեղեկություններ է տրամադրում այն մասին, թե [ինչպես Պատվաստվել](#):
- CDC-ի՝ [COVID-19-ի դեմ Պատվաստումներ](#) կայքէջ:
- Հարցերի դեպքում խոսեք ձեր բժշկի հետ

